**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. *ԿԱՆԳՈՒՆ***
**SPECIAL TOPIC: *CUBIT***

Աստվածաշնչում գոյություն ունեն երկու կանգուններ (BDB 52, KB 61): Սովորական կանգունը միջահասակ մարդու ամենաերկար մատից մինչև նրա արմունկը ընկած հեռավորությունն է, սովորաբար 18 դյույմ (օրինակ՝ Ծնն. 6:15, Ելից 25:10, 17, 23, 26:2,8,13,16, 27:1,9,12,13,14,16,18, Թվոց 35:4,5, 2 Օր. 3:11): Նաև գոյություն ունի ավելի երկար կանգուն (արքայական կանգուն), որը օգտագործվում է շինարարության մեջ (այսինքն՝ Սողոմոնի տաճարում), որը տարածված էր Եգիպտոսում (21 մատնաչափ), Պաղեստինում (24 մատնաչափ) և երբեմն Բաբելոնում (30 մատնաչափ): Այն 21 դյույմ երկարություն է (տես՝ 2 Մնաց. 3:3, Եզեկ. 40:5, 43:13):

Հնում մարդիկ օգտագործում էին մարդկային մարմնի մասերով չափման միավորներ: Հնագույն Մերձավոր Արևելքում օգտագործում էին՝

1. մեկնված ձեռքը
2. արմունկից մինչև միջնամատի հեռավորությունը (կանգուն)
3. բացված բթամատի և ճկույթի միջև հեռավորությունը (թզաչափ, տես՝ Ելից 28:16, 39:9, 1 թագ. 17:4)
4. բոլոր չորս մատների փակված վիճակում չափսը (մի բռունցք, տես՝ Ելից 25:25, 37:12, 3 Թագ. 7:26, 2 Մնաց. 4:5)
5. մատների մեջտեղի հողի չափսը (մատնաչափ, Երեմ. 52:21):